Է. ՏԱՐԻ　　ՇԱԲԱԹ 9 ՄԱՐՏ 1902　　ԹԻՒ 398

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Օտար երկիրներու համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. Երեքէն աւելի անգամներու համար 20 օ/օ զեղչ կըլլայ.

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեան հասցէով

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна
Rédaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Իւրաքանչիւր թիւին գինն
Արտասահմանի ձեռքէ
20 ՍԱՆԹԻՄ
Պուլկարիոյ համար ձեռքէ
15 ՍԱՆԹԻՄ

ՇԱՐԺՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻՆ ՎՃԱՐԷ

## ՄՈՒՐԱՑԿԱՆ ՀԱՅԴՈՒԿԸ

Գարնան երեկոյ մ՚էր. արեւելքէն մեղմ հովիկ կը փչէր.
Կապուտագոյն ամպ մը. երկնից կամարէն սահելով կանցնէր.
Բազմակարկաչ ծիծառն իւր գեղգեղանքն մեղմիկ կը գեղգեղէր.
Իսկ անձրեւին կաթիլներ առատ ու անդ մեղմօրէն կը թափուէր.

. . . . . . . . . . . .

Խաւարեցաւ ամպոտ օդը, անկանոն պատերազմի նման.
Կորկոտախառն անձրեւ տեղալ սկսաւ տարափանման,
Նոյն ժամայն տխրալի հառաչ մը լսուեցաւ լեռան կողէն,
Որ մերթ ընդ մերթ կը խափանուէր որոտագոչ անձրեւկաթէն.
Ձայնը կը բացականչէր, «Ա՛հ, ո՞ւր էք երանելի օրեր,
Օրեր, ո՞ւր էք մեր մանկական եւ հայդուկային օրեր;
Վաղափախուկ օրեր, որ սլացաք կարի արագաբար.
Օրեր, որ ոչ եւս պիտի տեսնեմ իմ աչքերով տկար.
Սակայն դուք կը ճանչնա՞ք, թէ ո՞վ է աս ձայնը տրտմահաղորդ
Որ եւ տասը տարի միշտ կը լսեմ այս լեռան ստորոտ.
Ձայնողը, հայդուկ մ՚էր-անձնուէր -կը պաշտուէր իւր ազգէն,
Որ կռուի ատեն աս լեռան տակ զրկուեցաւ լոյս աչքէն.
Այժմ մոռցուած իւր ազգէն, դարձաւ մի թշուառ մուրացկան
Կռնակը շալկած մի տոպրակ. աջ ձեռքը բռնած գաւազան,
Գլուխը խոնարհած, ձեռքն կարկառած, կը խնդրէ ողորմութիւն,
Ման գալով բոբիկ ոտքերով, խանութէ խանութ, տունէ տուն.

Ֆիլիպէ　　ՄՕՍԻՆ

## ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մենք լսել ենք որ արդէն Դաշնակցական արտասահմանեան երկու պատգամաւորական ժողովներ բացարձակապէս մերժել են միանալ Վերակազմեալների հետ. Պարսկաստանից եկած տեղեկութիւններն էլ այդ մասին բացասական ուղղութիւն ունեն. Նոյնպէս և երկրից եկածները՝

Դաշնակցական կոմիտէների մերժման գլխաւոր հիմքը այն է—որ Վերակազմեալները իրենց գոյութեան ընթացքում ոչ մի յեղափոխական գործ չեն կատարել, մինչդեռ համակերպել են հակայեղափոխական տարրին և շատ անգամ ամենայն կատաղութեամբ արգելք են հանդիսացել Դաշնակցականների գործունէութեան։

Յետոյ իմանում ենք որ Դաշնակցութիւնը տրամադիր չէ ոչ մի զոհողութիւն անել, պատրաստ պէտքէ լինէր ու և է զոհողութեան, եթէ իրենից զոհողութիւն պահանջողները լինէին իսկապէս յեղափոխական մարմիններ, բայց ոչ լոկ այդ անունը կրողներ։

Արդէն, եթէ մեր ստացած տեղեկութիւնները ճիշդ են, Արեւմտեան Բիւրոն, ուզած չուզած, ստիպված պէտք է լինի բացասական պատասխան տալ Վերակազմեալների կեդրոնական փորձութեան։

Այսպէս թէ այնպէս, մեր կարծիքով, Դաշնակցական կոմիտէները պէտք է աշխատեն չտապել իրենց որոշումները շուտով հասցնել Արեւմտեան Բիւրոյին, որպէսզի նա շուտով ազատվի իր փափուկ դրութիւնից, որի մէջ դըրել են նրան Վերակազմեալները։

Անձնականապէս, մենք իբր Դաշնակցական ընկեր, ոչ մի խօսք չենք կարող ասել Դաշնակցական կոմիտէների որոշման դէմ միութեան հարցի խնդրում։ Գործողներին է պատկանում՝ քննել և վճռել թէ որի՞ հետ կարող են գործել. եւ գործող կոմիտէների որոշումը յարգի է ամեն մի դաշնակցական անհատի համար։

ՎԱՐԴՕ

## ԴԷՍԻՑ ԴԷՆԻՑ

Պօէր զօրավար Տէլարէյ փառաւոր կերպով յաղթեց անգլիացի զօրավար Լորտ Մէթուէնը. մեծ թիւով անգլիացիներ գերեց, որոնց մէջ էր և Լորտ Մէթուէնը. Սակայն գիտես ի՞նչ կայ ընթերցող, Տէլարէյ՝ անզուգական վեհանձնութեամբ մը իր ձեռքը ինկած թշնամի գերի Լորտը ազատ արձակեց։

Թողունք այն պարագան որ պօէրները այդպիսի մեծ յաղթանակ մը տարին այն ժամանակ, երբ անգլիացիները կաշխատէին աշխարհի ցոյց տալ թէ պօէրները հիմա միայն աւազակներու պէս կը կռուին ու կանոնաւոր պատերազմ չեն մղեր և, ուշադրութիւննիս կեդրոնացնենք պօէրներու վեհանձնութեանը վրայ։

Պօէրներու վեհանձնութիւնը կը հաւասարի իրենց առասպելական քաջութեան։ Ո՞վ ոք կրնար երեւակայել թէ մարդ մը իր հայրենիքը, տունը տեղը քանդող թշնամիին հետ այսչափ վեհանձնութեամբ կրնայ վարուիլ ու պօէրները այդ աներեւակայելի օրինակը կուտան քանիերորդ դարու արիւնռուշտ քաղաքակրթուած մարդկութեան էն փայլուն ներկայացուցիչներուն՝ Անգլիացիներուն։

*
* *

Ռուսիոյ մէջ լեհական խլրտումները կը սաստկանան. Մօտերս ժիմնազի պատանի աշակերտները մերժած են Զարին համար օրհներգ երգել. ու կառավարութիւնը քննութիւններ կատարելով կը հասկնայ որ այդ աշակերտները անդամ են հակառուսական գաղտնի ընկերութեան մը։

Լեհ պատանիներն անգամ յանդգնութիւնը և քաջութիւնը կունենան դիմադրելու Զարի իշխանութիւններուն, քաջութիւնը կունենան իրենց հայրենասիրական զգացումները չը թագցնելու այնպիսի իշխանութեան մը դէմ, որմէ աշխարհ կը դողայ։

Ռուս կառավարութիւնը տասնեակ տարիներով ճնշումներ բանեցուց, աքսորեց, կախեց. բանտարկեց լեհերը. վերջապէս ազգ մը ջնջելու, մեռցնելու համար ինչ միջոցներ որ պէտք էին գործադրեց լեհերուն դէմ. բայց նորէն չը կրցաւ իր նպատակին հասնիլ. և ինչպէս կրնա՞յ, երբ մանուկներն անգամ դիմադրող, մաքառող, մարտնչող անվախ հայրենասէրներ են։

ՆԷՏ

## ՄԵԾ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ

II

Ըսինք թէ մամուլի քննադատութեան պակասութիւնը մեծ վնաս կը պատճառէ արտասահմանի հայ մամուլին, բայց նաեւ թէ՝ մեր ամենալուրջ համարուած հանդէսներու «մամուլի տեսութիւնը» կարդացողը պիտի կարծէ թէ՝ արտասահմանեան հայ պարբերական հրատարակութիւնները փափաքելի բարձրութեան վրայ կը գտնուին, որովհետեւ քննադատութիւնը բառին բուն եւ լայն մտքովը գոյութիւն չունի։

Քննադատութեան բացակայութիւնն է պատճառ որ մեր մէջ ամեն համբակ ինքզինքը գրագէտ, փիլիսոփայ կարծելով՝ անհագին քանակութեամբ թղթեր կը մրոտէ հայ ժողովուրդը մտաւորապէս եւ բարոյապէս բթացնելու համար. Քննադատութեան բացակայութեան պատճառով է որ ամեն մէկ տգէտ ու գռեհիկ արտադրած կը յանդգնի գրական ասպարէզ իջնալ հայ կեանքին ուղղութիւն մը տալու յանդգնութեամբ: Քննադատութեան բացակայութիւնն է պատճառ որ գիտութեան, մարդկային յառաջդիմութեան եւ ընկերաբանութեան վրայ գուսապի մը չափ գաղափար չունեցողը իր քոռ գրիչովը եւ բութ խելքովը կը չարչրկէ գիտութիւնը, մարդկային յառաջդիմութիւնը եւ ընկերաբանութիւնը։

Արտասահմանի հայ մամուլը, ինչպէս որ անցեալ յօդուածի մէջ ըսինք, չը նայած պայմաններու առաւելութեանց՝ շատ ստոր աստիճանի վրայ կը գտնուի, եւ եթէ այս երկար տեւէ, մեր ազատ մամուլը օգուտ մը չը պիտի բերած ըլլայ հայ ժողովուրդին։ Ես կրնամ՝ թերթեր եւ հանդէսներ օրինակ բերել, որոնք տարիներով հրատարակուելով հանդերձ, ոչ մէկ օգտակար նիւթ տուած են իրենց ընթերցողներուն։ Այդ պարբերական հրատարակութիւնները թերթելով մարդ կրնայ ապշիլ անոնց խմբագիրներու յամառ ամլութեանը վրայ եւ հայ ընթերցողներուն համբերութեանը վրայ որ կրցեր են տեսակ հրատարակութիւններ կարդալով բաւականութիւն ստանալ։

Բարիզի պէս կեդրոնի մը մէջ «Հա

մալսարան» հանդէսը կը խմբագրուի գեղեցիկ ծրագրով, երիտասարդ զարգացած խմբագրի մը տնօրէնութեամբ եւ այդ ամսագրին մէջ մենք մինչեւ օրս մամուլի լուրջ քննադատութեան մը չը հանդիպեցանք. անոր քովն է «Անահիտ»ը որուն մէջ ատանկ քննադատութեան մը նշոյլը չի կայ, թէեւ Պ. Զօպանեան առ հասարակ քննադատի բաճկոնով ասպարէզ իջաւ։

Վէնէտիկի մէջ «Բազմավէպ»ը կայ. իր տեսութիւններուն մէջ ամէն հրատարակութեան համար գեղեցիկ գեղեցիկ ածական մը կը գտնայ։

Վիէննայի մէջ, «Ամսօրեայ հանդէսը» միայն վերջին ժամանակներս հայ մամուլի մասին ընդհանուր գծերով քննադատական մը հրատարակեց, պակասութիւններ մատնանշելով։

Ես հանդէսները կը յիշեմ, որովհետեւ հանդէսներու մէջ աւելի յարմարէ լուրջ եւ լայնօրէն ուսումնասիրուած քննադատականներ գրել մեր մամուլի մասին։

Նոյն վերաբերմունքն է նաեւ հրատարակուած գրքերու հանդէպ։ Ամէն նոր գիրք, որչափ ալ անբովանդակ եւ աննպատակ ըլլայ գովասանքի կարժանանայ կը քաջալերուի։ Այն պէս որ հեռուէն դիտող եւ այդ գրքերէն ոչ մէկը չը կարդացող հայը պիտի կարծէ որ ամէն նոր հայերէն գիրք հանճարի մը արտադրութիւն է։

***

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—o—

Իշնպատ Կարնոյ արկածելոց Սլիվէնի պատ. աղքատախնամ ընկերութիւնէ ստացանք Տիար Գոչունեանի ձեռամբ 40 ֆր. ոսկի, ու գրեցինք Կարին վճարելու։ Հաւատար այդ գումարը Երկրաշարժի հայ կարօտելոց յանձնաժողովին։

Գ. Սահակեան

Վառնա 5 մարտ 1902

## ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆ ՄԸ

—(][)—

Այն օրէն ի վեր, երբ «Շարժում» գուժելով Կրիանուպօլսոյ անմահ հերոսներու եղերական վախճանը հրապարակ դրաւ մեծ հայրենասէրին Սէրէմճեանի գործերուն վերաբերեալ խնդիրը, այն օրէն ի վեր գրեթէ միշտ յուզումով սպասած եմ թերթերու գալստեանը. զգացած ուրախութիւնս նկարագրելու անկարող եմ, երբ գործնական համակրանքներու արձագանքները իրենց կարգին կարդալու հրճուանքը կը վայելեմ։ Այո՛, հայ—երիտասարդութիւնը գործունէութեան նշաններ ցոյց կուտայ, իսօսքով յեղափոխական ըլլալ աւելի, գործնականին կը դիմէ, կարժէ շնորհաւորել. մանաւանդ «Կայսրաքաղաքի» եւ Խարբերդի Բաղարճըքի երիտասարդութիւնը, քանի որ անոնք յառաջնթացներ հանդիսացան իրենց համեստ ու աննշան վայրերէն։ Ի զուր տեղական աղգային (իբր թէ) թերթ մը Թաթար Բազարճըքցի «ՇԱՐԺՈՒՄ»ի թղթակից վարկաբեկ ընել կաշխատէր «ոչլոտ թղթակից» և այլն կարգ մը փողոցային հայհոյութիւններով. ապրի գաղափարական երիտասարդութիւնը։ Միայն թէ յոգ ներեն ինձ Ռուսճուքցի յարգելի պարոնները, երբ զիրենք խնդրոյ նիւթ կընեմ յօդուածիս։

«Շարժում»ի 393 թուոյն մէջ կը գտնենք ի նպաստ նոյն գործին նուիրատուութեանց ցանկ մը, ուր յարգելի նուիրատուները ամբողջութեամբ Դաշնակցականներ ըլլալնին կը յայտնեն. արդեօ՞ք այդ քաղաքին մէջ տարբեր կուսակցութիւններ գոյութիւն չունին, որ այդ պարտականութիւնը մի միայն Դաշնակցականներ կը կատարեն։

Արդ ի՞նչու այս անտարբերութիւն, թող «Պետա» Դաշնակցական եղած լինի. միթէ իր վեհ ձեռնարկը և հերոսաբար նահատակութիւնը, ամէն հայու (խօսքս ճշմարիտ հայերուն է) ակնածանքը լիուլի վայելելու իրաւունքը կարող է չեզոքացնել իր Դաշնակցական մը ըլլալովը. եթէ երբէք այդ պաշտելի ու աննման հերոսները իրենց նպատակին հասնելու լինէին, մի միայն Դաշնակցական և Մակեդոնական Կոմիտէի անդամ բանտարկեալներու պատութի՞ւնը պիտի պահանջէին, ապա թէ ոչ ամբողջ հայ և պուլկար քաղաքական բանտարկեալներու։

Թէպետեւ այդ անձնուէր հերոսներու հետ անձնականապէս ծանօթ լինելու բաղդը չեմ ունեցած, սակայն լիովին վստահեմ թէ ատոնք առիթը եթէ ձեռք ձգէին նոյն իսկ թուրք գաղափարական բանտարկեալներն իսկ պիտի ուզէին ազատել, անոնց վեհանձն սրտերու մէջ ճղճիմ ուրախութիւնից Զարուհու շունչը կտրվեց. նա ոչ մի խօսք չը կարողացաւ պատասխանել հարսին. մեքենաբար մօտեցաւ տիսուին եւ ընկաւ վրան։

Հարսը ներս մտաւ, ու մօտենալով օրիորդին ասեց.

—Մի քիչ ջուր խմեցէք օրիորդ, այդ չափազանց ուրախութիւնից է. իսկոյն կանցնի, ու համբուրելով Զարուհու երեսը սկսեց շոյել նրա մեռած քսութել մազերը։

—Այո, ուրախութիւնից է Շողակաթ. բայց զարմանալին այն է որ ես հիմա այս բոպէիս մտքով Վահէին հետ էի եւ նա էլ եկաւ. մտածում էի թէ այս սարսափելի ցրտին ճանապարհին է։

—Միշտ էլ մտքով նրա հետ էիր. երբ էլ որ գար. իր վրա մտածելիս պէտք է գտնէր քեզ. պատասխանեց Շողակաթը։ Հիմա ես գնամ, պարոն Վահէի համար կերակուր պատրաստեմ. Արշակն էլ հետն է. էն երիտասարդ տղէն։ Անօթի կը լինին խեղճերը։

—Դնա, գնա Շողակաթ. մի քիչ յետոյ ես էլ կը գամ։

Շողակաթը դուրս գալուն պէս Զարուհին վրան գլուխը կարգին բերեց. ճիգեր թափեց որքան կարելի է իր ուրախութիւնը ճնշել օտարների մօտ իր զգացումների զեղումը զրսպելու դիտաւորութեամբ, ու գնաց Վահէի սենեակը։

Սենեակ մտնելուն պէս Վահէն, որ թախտի վրա հանգստանում էր ու տան տիրոջ հետ խօսում, իրկոյն տեղից վեր թռաւ, եւ առանց կարեւորութիւն տալու ներկաներին նշանածի գլուխը գրկի մէջ առաւ։ Տան տէրը թէեւ մի քիչ լուսաւորված վաճառական Շողակաթի ամուսինը, գլուխը մի կողմ դարձրեց. քրդին գնդակահար անող անհամբեր Արշակը մինչեւ ականջների արմատը կարմրեց եւ աչքերը գետին խոնարհեց։

Վերջապէս նշանածները բաժնվեցին. Վահէն իր տեղը նստեց ու կարելի եղած պաղարիւնութիւնով սկսեց տան տիրոջ հետ ընդհատված խօսակցութիւնը շարունակել. Զարուհին մօտեցաւ Արշակին ասելով.

—Ներով Արշակ, ի՞նչպէս էր ճամբորդութիւնը. թշնամու հանդիպեցի՞ր։ Արշակը կարմրեց.

—Ինչպէս չէ, նրա փոխարէն, պատասխանեց Վահէն, որի աչքերը եւ ականջի մէկը չորունակ Զարուհու կողմն էր։ Մի քուրդ ուզեցաւ եւ այն ժամանակ, երբ քուրդը ինձ էր սպառնում։

Զարուհին երախտագիտական մի հրաշալի նայուածք պարգեւեց Արշակին. Արշակը կրկին կարմրելով պատասխանեց։

—Սուտ է ասում օրիորդ. ես քուրդին սպանեցի, որովհետեւ նա չարհամարհանքով խօսեց հայի մասին եւ պարծեցաւ թէ շատ հայ է սպանել։

(Շարունակելի)

այս տեսակ պարագաներու մէջ՝ տնկուած ըլլանք. ոյնպատեն մեր փափաքած միութիւնը ինքնին իրականացած կը լինի արդէն։

Ա. Ո.

# ԴԺԳՈՀԸ

Վառնայի ծովափն գտնուած սրճարաններէն միոյն մէջ նստած է մեր ծանօթ Դժգոհը ու իր մտածէ.— համբերութիւնս անյաջող եղաւ, մանաւանդ աս «Շարժում»ին խմբագիրը, չը նայելով գնս երկու ամիս առաջ կարմրաներկ ոչ արխինով գըրուած ի հարկէ, նամակին, կրկին գրի՛չը խոթեց մեր սուտ միութենական Թարախին մէջ, ու ամբողջ ժահը դուրս ժայթքեցուց։ Ճար մը գտնելու է. եւ յանկարծ միտքը կուգայ.

—Եա, Հ. Շէֆքին ալ ի՞նչու համար ստեղծուած է. չէ՞ որ ան Թուրք մըն է. եւ յիսուն ֆրանքի համար հայրենիքը ազգը ծախող մը. երթամ անոր քովը, համբուրուիմ, ինծի համար՝ ոլ ոտ Թուրքն ալ մարդ է. ին ծի ընկեր է, երբ պէտք է առջեւս եւ լ ւրին մ՛ասս մը հասցնել։ Ես ալ Թուրքէ լաւ չեմ, կըսէի Թէ երակներուս մէջ հրէայի արիւն կայ. վաս հրէայի։

Այս որոշումին վրայ Դժգոհը վեր ելաւ, կամաց կամաց ճեղքեց անցաւ Մուստաֆա եւ Հ. Շէֆքիին գտնելով անցաւ դէպի Նոր Թաղ, ու մտնելով մէյխանէ մը նստեցաւ Շէֆքիին հետ։

—Ներողութիւն եղբայր, ես քեզի առաջ դուրսը անուանած եմ. քու Հայագուգոյն ըլլալդ. բայց երբ իմացայ Թէ դուն ոչ միայն դաւաճան այլ եւ հաստատ Թուրք մըն ես, ուրախութեանս չափ չը մնաց. մենք սուտ միութենականներս Թուրքերը շատ կը սիրենք, մանաւանդ հայէ դարձածները. ու յիսուն ֆրանքի համար ամեն բան ծախող Թուրքերը։ Եկուր, մենք ալ հայերը չենք սիրեր դու արդէն գանոնք կը ծախես յիսուն ֆրանքի՝ մենք ալ յեղափոխականները չենք սիրեր, դու ալ հիչ չես սիրեր, միանանք, Հուգուգ մեր տրամադրութեան տակը դիր. Թող մեր «օսկան»ը ան ըլլայ. Հիչ հոգդ Թող չըլլայ մենք մեր«անխառն» բարոյականութեամբ պիտի ամենուն վրայ ազդենք։

Շէֆքին անգամ զարմացաւ այդ բարոյական խօսքին վրայ։

—Ի՞նչ կը զարմանաս, առարկեց Դժգոհը. Միթէ բարոյականութիւն չէ՞ բանտին մէջ նստակ ստանալ եւ ընկերներուն փարա մը չը տալ. միթէ բարոյականութեան գերագրական աստիճանը չէ՞ քեզի պէս մարդու մը հետ պագասութիւ եւ ընկեր դառնալ։

—Այո բարոյականի էն մեծն է. Ծիծաղ կըսես աղբարիկս. Ես պատրաստ եմ քեզի ամեն ծառայութիւն մատուցանել և Հուգուգս ձեր տրամադրութեանը տակ դնել. Այս մեր ժողովուրդին մէջ քեզի պէս բարոյականի տէր մարդիկ շատ հազուադէպ են։ Ես կը կարծէի Թէ ես միայն եմ, հիմա կը հասկցուի որ սուտ միութենականներն ալ ինծի պէս են. ծն անդր առաջ յարգելի բարեկամս։

Մ.

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Շումլա 5 մարտ 1902

Հանրային շահու ու կրթական տեսակէտով՝ տեղւոյս հայ գաղութը ներկայիս գերազանց վիճակ մը ունի, շնորհիւ այն կարգ մը երիտասարդներու, որոնք մի քանի ցեցերու յարուցած խոչընդոտներն ոտից տակ տրորելով, ամեն ջանք ի գործ դրին ազգայնոց մէջ համերաշխութիւն և եղբայրութիւն հաստատելու համար պէտք եղած տնօրինութիւններն ընելով։

Այժմ տեղւոյս հայութիւնը միայն տեսական նկատումներէ ենթարկուած տարր մը չէ՛, այլ նա գործնականապէս ապացուց, որ ինք մտաւորական ու բարոյական բարձրութիւններին հասնելու համար պարտաւոր էր հնարաւոր միջոցներու դիմել ու այդպէս ալ ըրին։

Արականին յաջորդեց փափուկ սեռը. և մեզ համար ուրախալի նորութիւն մ՛է իգական սեռի անձնանուիրութիւնը այն գործի մէջ՝ որով կուգայ հաստատելու Թէ «հայ կինը Ասիական օրէնքի Թոյլ տրամադրութիւններէ շա՛տ հեռու է եղած». ի՞նչ է տեղւոյս տիկնանց ընկերութեան նպատակը. աշխատիլ ընթերցասիրութեան մղում տալ իգական սեռին և նպաստել յեղափոխութեան. խիստ գեղեցիկ գաղափար չէ՞ ընթերցա՛ղ, բայց մեզ համար ցանկալի էր որ Պուլկարիոյ և առհասարակ արտասահմանի բոլոր հայաբնակ քաղաքներու մէջ կազմուէր նոյնատեսակ կանանց ընկերութիւններ որոնց նպատակը լինէր իգական սեռին յառաջացման ատարել։

* *
*

Մի ուրիշ նշանակելի երեւոյթ, երկու ընթերցարաններու գոյութիւնը, որոնցմէ մին «Ազգային» իսկ միւսն «Հայկական ակումբ» է Պետօ Պուլկարացի անուամբ. չքեղ մի հիմնարկութիւն ճոխացած բազմաթիւ Թերթերով։

Կիրակի երեկոյին նոյն «ակումբ»ին մէջ ընդհանուր ժողով տեղի ունեցաւ առժամ. վարչութեան նախաձեռնութեամբ, անդամները գրեթէ ամբողջութեամբ ներկայ էին։ Օրակարգն էր.

1. Ընթերցում կանոնագրութեան. 2. ընտր. Տնօրէն ժողովոյ. 3. հանգանակութիւն (կատարելի միայն մի անգամի, պարտուց բարձման համար)։

Կանոնագրութիւնը կարդացուելէն վերջ Հայ. յեղ. Դաշ. Կոմիտէն որ ըստ կանոնագրի ինք կորոշէ և կընտրէ Տնօրէն ժողովը, հետեւեալ անձերը նշանակած է.

Տիար Սողոմոն Պօյաճեան
» Արտաշէս Կարապետեան
» Պօղոս Մ. Պօյաճեան
» Յովհաննէս Սայ ան և
» Ռուբէն Յարութիւնեան որոնք միրայօժար ստանձնեցին իրենց պաշտօնը։

Պրն. Ա. Կարապետեան մի քանի գրուաւոր խօսքերէ վերջ աւելցուց Թէ «Տնօրէն-ժողովս ամեն զոհողութիւն յանձն պիտի առնէ ընկերութեան պահանջքին ալ աւելի բարգաւաճութիւն տալու ու օրէնքին համապատասխանելու համար պէտք եղած աշխատանքը չը զլանալ։

Զօլաքեան

Վառնա, 30 Յունվար

Պատ.

Խմբագրութիւն «Շարժում» լրագրի

Տէր Խմբագիր

Հաճեցէք սոյն յայտարարութիւնը հրատարակել Ձեր աղգօգուտ Թերթի մօտակայ Թիւի մէջ, որոյ համար կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնը։

Ի դիմաց պատգամաւորական ժողովի

Քարտուղար Նախագահ
Անդրէասկօչկարեան Յ. Ճանկիւլեան

Բազմաթիւ հետաքրքիրներին ցոյց տալու համար Թէ որոնք են այն եռեւելի յեղափոխական կարող հայրենասէրները, որ ուզում են հայ ազգը փրկել և իբր Թէ անկեալ հայ յեղափոխութիւնը բարձրացնել՝ հրատարակում ենք սոյս նամակը, որը մեզ գրուած է ամիս ու կէս առաջ և դրկուած Միութենական կոչուածներուն մի յայտարարութեան հետ. այդ նամակի մասին մենք դիտմամբ լռեցինք, որպէսզի տեսնենք Թէ Ճանկիւլեանի օյինբազութիւնները մինչեւ ուր են հասնում. այսօր ժամանակ ենք համարում հրատարակել, եւ ժողովրդին պարզել Թէ՝ սուտ միութենականները, նախ քան «Շարժում»ի քննադատութիւնները որչա՛փ յարգանքով էին վերաբերվում դէպի «Շարժում»ի խմբագիրը։ Մեզ զարմացնում էր մանաւանդ Ճանկիւլեանի աներեսութիւնը, որին «Շարժում»ի խմբագիրը ժամանակին աւելնացած տիտղոսն է տուել եւ մինչեւ օրս էլ նոյն կարծիքին է։ Որ հային յայտնի չէ՞ որ Ճանկիւլեանը ամեն կուսակցութեան էլ Թշնամի է, որովհետեւ ոչ մի կուսակցութիւն էլ նախագահ եւ վարիչ չէ ընտրել այդ գռեհիկ եւ տգէտ արարածին։

Խմբագրութիւն

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Վարչութիւնս շնորհակալութեամբ ստացած է պրն. Պ. Գալֆայեանի միջոցաւ կատարուած հանգանակութենէ գոյացած 127 ֆրանքի գումարը—Նոր գիրքեր բերել տալու նպատակաւ հանգանակուած—, որ յատկացուեցաւ իր նպատակին։

Յարմար առիթ կը սեպենք նաեւ մեր խորին շնորհակալութիւնը յայտնելու հետեւեալ ազգայիններուն, որոնք մասնակցած են վերոյիշեալ հանգանակութեան։

Յարգանօք՝

«Հայկ. ընթերցարան»ի վարչութեան

| | |
|---|---|
| Ատենադպիր | Ատենապետ |
| Մ. Յ. Մանուկեան | Ս. Գույումճեան |

Ռուսճուք 3 մարտ 1902

| | Ֆրք. Սնթ. |
|---|---|
| Գառնիկ Մազմանեան | 0.50 |
| Ոմն | 10.— |
| Ոմն | 5.— |
| Ոմն | 20.— |
| Ոմն | 5.— |
| Եղբարք Քէլանեան | 5.— |
| Ոմն | 5.— |
| Ոմն | 5.— |
| Զ. Խադումեան | 3.— |
| Պ. Յակոբեան և Մէճէլեան | 1.— |
| Ի. Մկրտիչեան | 2.— |
| Մ. Բարթիկեան | 1.— |
| Յ. Ալիքսանեան | 1.— |
| Օննիկ Սարաֆեան | 3.— |
| Ոմն | 5.— |
| Ոմն | 15.— |
| Կ. Պօհչաճեան | 2.— |
| Յ. Երամօֆ | 3.— |
| Թ. Փափազեան | 1.— |
| Եղբարք Գալֆայեան | 3.— |
| Մ. Ալթունեան | 1.50 |
| Ս. Գույումճեան | 20.— |
| Մ. Պէտէլեան | 4.— |
| | 127.— |

# «ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ»

Շրջաբերական—Նամակ

Ընկերներ,

Կեդրոնական յանձնաժողովը յայտարարում է ի գիտութիւն Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան բոլոր անդամակցիներին և անդամներին, որ 1902 Թւի Համագումարը կը բացուի Ժընեւում Զաւէն տոներին, այն է մարտի 31ին, երկուշաբթի օր, և կը տեւի մի շաբաթ։

Համաձայն մեր կանոնագրութեան 10րդ յօդուածի՝ խնդրում ենք ուսանողական տեղական մարմիններին՝ ձեռնարկել պատգամաւորների ընտրութեան և ընտրուածների անունները տեղական մեզ՝ ցուցակի մէջ մտցնելու համար։

Խօսակցութիւն կարդալ ցանկացողները Թող բարեհաճեն իրենց որոշման և ընտրած նիւթի մասին հաղորդել Կեդրոնական յանձնաժողովին ոչ աւելի ուշ քան փետրվարի 25ը, որպէսզի կարող լինենք վաղօրօք պատրաստել Համագումարի ծրագիրը։

Հրաւիրում ենք տեղական մարմիններին՝ յատուկ ժողով գումարել և պատրաստել այն բոլոր առաջարկները, որ կուզենային ենթարկել Համագումարի քննութեան, տեղեկագրելով այդ մասին մեզ՝ նոյնպէս ոչ աւելի ուշ քան փետրվարի 25ը։

Ժընէվում մարտ ամսին կը կազմուի յատուկ մասնաժողով եկող ընկերներին ընդունելու և դիւրութիւններ տալու համար։

Ընկերական բարեւներով,
Կարգադիր Յանձնաժողով

1902 1 փետրուար
Ժընեւ

Հասցէ՝ Ունիւն տէ Ջէնիւիդիան Սուիսիսէ տը լ'Էրօր, ռիւ տը լ'Էքօլ տը շիմի. 2 Ժընեւ.

## ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Թիֆլիսի մէջ Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսի յիշատակին հոգեհանգիստ կատարուեր է։ Ը՛նդ ոիմեան այս առթիւ գեղեցիկ ճառ մը խօսեր է։

—Թիֆլիսի հայ թատրոնական ընկերութեան կանոնագրութիւնը կառավարութեան կողմէ հաստատուեր է։

—Պոլսոյ թերթերը կը հաղորդեն որ դպրոցներու դասաւանդութեանց մէջ յապաւում եղած չէ։

—Կսեն թէ Մանչէսդրի ազգայինները Բարիզի Վռամշապուհ քահանայէն խնդրած են իրենց հովուութեան պաշտօնը ստանձնել Թորոս քահանայի տեղ։

—Շամախի հայ թէմին վերաբերեալ գործերը առժամապէս Պաքու փոխադրուեր է։

—Կը լսուի թէ Վանայ Այգեստանի նորաշէն թաղի հայերը որոշած են իրենց քահանաներուն ապրուստի և նիւթականի խնդիրը լուրջ դրութեան մէջ դնել, ասկէց վերջը թոշակ վճարելով քահանաներուն և մուրացիկի դրութենէն ազատելով։

—Երէտասարդ թուրքերուն համաժողովին ներկայացող Վերակազմեալ հնչակեաններու պատգամաւորներէն մին Արշակ Զօպանեան եղած է։ Ինչպէս կերևի Պ. Զօպանեան իր վեհ(՞.) առանձնութենէն ձանձրացած է և այժմ Վերակազմեալ կուսակցութեան մէջ կը գտնուի։ Հիմա Պ. Պ. Զօպանեանի և Ջերազի մէջ վէճ մը բացուած է համաժողովի առթիւ. թէ ո՞վ ինչ ըսաւ համաժողովին ժամանակ։

Ճիշդ այն վէճին պէս, ինչ որ տեղի ունեցած է Պէրլինի վեհաժողովին գացող պոլսեցի պատգամաւորներուն միջեւ, որուն շարունակութիւնը մինչեւ վերջին օրերս կը տեւեն։

—Պատրիարքարանը նորէն երախտագիտական ուղերձ մը մատուցեր է Սուլթանին, բայց թէ փատիշահին որ շնորհին համար, դեռ յայտնի չէ։

—Նումլայի պատուաւոր ազգայիններէն և քաղաքապետութեան անդամ, Տիար Սողոմոն Ղեյաճեան իր անխոնջ չանքովը կրցած է քաղաքապետութեան տօմարին մէջ ներկայ տարուան պիւտճէին համար մտցնել 1000 ֆրանք ազգ. վարժարանաց և 100 ֆր. ընթերցարաններուն ի նպաստ գումար մը։

—Սատանք Պարսկաստանի Հայկազեանական ընկերութեան առաջին հրատարակութիւնը՝ «Մարդկութեան ամենամեծ թշնամին» գրքոյկը. կազմուած յարգելի Տօքթօր Կ. Ց. Փաշեանէ։ Գրքոյկը ձրի կը տարածուի։ Մաղթենք կը խօսինք այդ օգտակար գրքոյկի մասին։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ՌՈՒՐՔԻԱ

Ֆուատ փաշան դատապարտուած է ատրճանակներէն զրկուելու և հինգ տարուան բերդարգելութեան։ Կը մեղադրուի կայսրութեան մէջ ապստամբութիւն բարձրացնելու տրամադրութեան և գործունէութեան մէջ։

Սուլթանը եւրոպական դեսպաններուն յայտարարած է որ այդ մեղադրանքները հաստատուն հիմերու վրայ եղած են և չուտով ատոնց մանրամասնութիւնները եւրոպական պետութիւններուն ալ պիտի հաղորդուի գրաւոր կերպով։

—Եանինայի քովերը Ալպանացիներ յարձակեր են Ֆրլիտրսի կառավարութեան շինութեան վրայ. թէ գործքերու և Ալպանացիներու կողմէն շատ սպաննուածներ կան։

Եանինայէն զօրք զրկուած է։

—Պոլսէն «ԺԱՄԱՆԱԿ»ի կը հաղորդեն որ ռուսական դեսպանը խստօրէն Սուլթանէն պահանջելով ամբողջ կայսրութեան մէջ բարենորոգումներ մտցուին, բաւական բացորոշ կերպով յայտնարարած է որ եթէ երկրի ներկայ կացութիւնը չը բարւոքուի. Աւստրիա պիտի միջամտէ Մակեդոնիոյ համար. իսկ Ռուսիա Հայաստանի։

Կասկած չը կայ որ Մակեդոնիոյ և Ալպանիոյ կացութիւնը խաղաղութեան համար շատ վտանգաւոր կը համարուի։

—Սուլթանի հրամանով արտասահման զրկած թուրք ուսանողներու ամսաթոշակները դադրեցուցած են։

Պատճառը այն է որ քանի մը ուսանողներ մասնակցած են երիտասարդ թուրքերու համաժողովին։

—Լուր կը պատի որ նոր ձերբակալութիւններ տեղի ունեցեր են Ժովսլէն վարժարանի սպաններուն մէջեւ. մօտ 40 սպաներ ձերբակալուած են։

—Ռուս դեսպանին ճնշումներուն վրայ ռուսական դպրոցներուն գոյութիւնը Սիրիոյ մէջ իրատէով մը վաւերացուցուած է։

Կրկին սպաներ և քաղաքական պաշտօնեաներ ձերբակալուած են վերջին օրերս։

Նաւ մը աքսորականներով լեցուն ճամբայ ինկեր է դէպի Կարմիր Ծով։

—Պալատը որոշած է չը վաւերացնել Ֆուատ և Նազիմ փաշաներու իրենց ատիճաններէն զրկելու որոշումը. միայն աքսորի վճիռը պիտի գործադրուի։

—Պուլկարական լեզափոխականներ հրասախումբ մը ձուտա Բալայի գաւառին մէջ յարձակում գործեր է թուրք զինուորներու վրայ, բայց ետ մղուեր է երկու հոգի կորսնցնելով։

### ՊՈՒԼԿԱՐԻԱ

Իշխանը վերադարձեր է Սոֆիա։

—Սոֆիա անցեալ գիշեր փողոցին մէջ սպաննուած է հարուստ հրէայ մը։

Հրէան շատ ժլատ և նշանաւոր վաշխառու մը մը եղած է։

Նախարարապետ Պ. Ցանէֆ. Իշխանին ներկայացուցած նախարարական ցանկը, պակասներուն տեղը լեցուած անուններով։

—Պուլկար թերթեր կը հաղորդեն որ ազգային ժողովին յառաջիկայ համագումարին փոխառութեան խնդիրը չը պիտի վիճաբանուի։ այլ աշնան համագումարին մէջ։ իբր թէ ֆրանսացի ուրիշ դրամատէրեր աւելի ձեռնտու պայմաններով պատրաստ են դրամ տալ։

—«Թան» կը հաղորդէ որ Սոֆիայի մէջ ռուսական ներկայացուցիչ նշանակուեր է Պոլսոյ ռուս դեսպանատան առաջին թարգման Մաքսիմօֆ։

—Ստամպոլովիստները Սոֆիայի մէջ ժողով ունեցեր են կուսակցապետ Բէթքով յայտարարած է որ իրենք զուտ հակակառավարական պիտի ըլլան յառաջիկայ երեսփոխանական ժողովին մէջ։

### ՌՈՒՍԻԱ

Բեթէրսպուրգի ուսանողները ակնածելի քանակութեամբ չը՝ չաբերականներ տարածեր են, որով կը բողոքեն իրենց անհատական և ընկերակցակ ն իրաւունքները բռնաբարուելուն, ծայրայեղ հարկերուն և վարչական զեղծումներու դէմ. նոյնպէս կառավարական ռէժիմին դէմ, որ կըստիպէ թերթերը լռել։

—Շրջաբերականները նոր ժողովրդային ցոյցեր ընել կսպառնան։

—«Թան» մասնաւոր աղբիւրներէ կիմանայ որ ռուս արտասահմանեան անցագիրներուն գինը 150—600 ռուպլի բարձրացնելու օրինագիծ մը պիտի առաջարկուի պետական խորհրդին։

### ԻՏԱԼԻԱ

Եանիայի նահանգապետը արգիլած էր իտալական դրօշակով նաւերու մուտքը Բրէվիզէի նաւահանգիստը։ Իտալական կառավարութիւնը բողոքեր է Բ. Դրան։

—Իտալական քանի մը թերթեր կը պնդեն որ Երբեակ դաշնակցութիւնը նորոգելու համար բանակցութիւններ սկսուած են։

### ԹՐԱՆՍՎԱԼ

Անգլիական մէկ քանի թերթեր կը հաւաստիացնեն որ Լորտ Ուէսթլէի Թրանսվալ գացած է անգլիական կառավարութեան կողմէն առաջարկութիւն մը ընելու Գոէր զօրավարներուն։

## ☛ ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Այս գիշեր գիշեր, ժամը 9ին թատերաբեր երիտասարդաց կողմէ, ի նպաստ հիկին Գայծառ Ֆաուլեաճեանի, պիտի ներկայացուի,

ՑՈՒԴԻԴ
ԿԱՄ
ՍԷՐ ԿՐՕՆԻՑ ԵՒ ՀԱՑՐԵՆԵԱՑ

ողբերգութիւնը, տառկերէն լեզուս հեղինակութիւն հռչակաւոր Ռուսինի 5 արարուած։

ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

### ԿՕՇԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հայրապետ Սարգսեան «Բրէսլավկա» մեծ պղօտային վրայ.

Ամենաընտիր ապրանքէ պատրաստի եւ մասնաւոր պատուէրով կօշիկներ. գները չափաւոր. Վստահ ենք թէ յաճախորդները գոհ պիտի մնան ամեն կերպ.

Վառնա

3

### ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ով որ կը փափագի սենեկին գեղեցիկ եւ արժանավայել զարդ մը աւելցնել, Թող բարեհաճի ղրկել մեր հասցէին 2.50 ֆրանկ, 1 ռուբլի կամ 50 սէնթ, փոխարէն՝ ապահովագրեալ ծրարով, կընդունի Հայոց սիրելի ՆԱՀԱՊԵՏԻ Հ. ԱԼԻՇԱՆԻ մեծագիր լուսատիպ պատկերն, յատուկ թանքով տպուած 50էն 65 հարիւրամեայ մեծութեամբ փայլուն եւ ուռուցիկ թուղթի վրայ։ Գործակալաց եւ մեծաքանակ գնողաց իւրաքանչիւր տասը օրինակաց վրայ մէկ օրինակ ձրի կը ղրկուի։

Отговорникъ :
Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность" — Варна